ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

30 մայիսի 2018 թվական

3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՄՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 12.40

Տարոն Մարգարյան

-Ավագանու հարգելի անդամնե՛ր, հարց ու պատասխանի համար գրանցվել են ավագանու 15 անդամ՝

Անի Սամսոնյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Գրիգոր Մինասյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Դավիթ Խաժակյան ՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Արմեն Երեմյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Աննա Ասատրյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Տիգրան Տեր-Մարգարյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Հասմիկ Սարգսյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Անահիտ Բախշյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Լիլիթ Բեգլարյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Սերգեյ Ղահրամանյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Նարա Հովհաննիսյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Հարություն Բաբայան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Զարուհի Բաթոյան՝ «ԵԼՔ» խմբակցություն

Առաջին հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Անի Սամսոնյան, խնդրե՛մ:

Անի Սամսոնյան

-Շնորհակալությու՛ն, ես երկու հարց ունեմ, երկուսն էլ վերաբերում են այն ելույթներին, որոնք ես հնչեցրեցի ամբիոնից:

Առաջին հարցը. Արաբկիր համայնքի Մամիկոնյանց փողոցի հ. 42, 44 և 40 շենքերի միջանկյալ հատվածում 42/1 հասցեում, այս պահին ընթանում են շինարարական աշխատանքներ: Կառուցվում է 16-հարկանի շենք, ընդորում, շինարարությունն սկսվել է շինարարական նորմերի խախտումներով և շարունակվում է այժմ: Կառուցապատողը շինարարության թույլտվություն չունի: Այս պահին բնակիչներն իրենց արդարացի բողոքն են հայտնում այս խնդրի կապակցությամբ: Ցանկանում եմ Ձեզ հարցնել. ի՞նչ միջոցառումներ եք ձեռնարկելու, որպեսզի այս խնդիրը կարգավորվի:

Երկրորդ հարցը վերաբերում է Աբովյան փողոցի 5/1, 5/2 և 5/5 հասցեներում, «Մուլտի Գրուպ կոնցեռն», «Ա.Ա.Դ. Հոթել» ընկերությունների և Մանթաշյանի կողմից իրականացվող շինարարությանը: Բազմաթիվ նախազգուշացումներ եք տվել, ինչպես ինձ հայտնել են քաղաքապետարանից, սակայն այդ շենքի հարկերն օրեցօր ավելանում են:

Ես գիտեմ, որ մեկ անգամ նույնիսկ տուգանել եք և պատրաստվում եք երկրորդ անգամ տուգանել, բայց այս պահին, իրավիճակն այնպիսին է, որ Ձեր նախազգուշացումները և վարչական տուգանքները որևէ ազդեցություն չեն ունենում այս կառուցապատողների վրա: Ես ցանկանում եմ հասկանալ, եթե երկրորդ անգամ տուգանելուց հետո այս նախազգուշացումները ևս անտեսվեն, ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու, որպեսզի այդ շինարարությունը կանխվի:

Տարոն Մարգարյան

-Շնորհակալությու՛ն, առաջին հարցին կպատասխանի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ Հայկ Ասատրյանը, խնդրե՛մ:

Հայկ Ասատրյան

-Շնորհակալություն, Մամիկոնյանց 42/1 հասցեի հետ կապված, հայտնեմ, որ ինչպես կողքի՝ շուրջ 10 տարի շահագործվող շենքը, այնպես էլ դրա հերևանությամբ գտնվող անավարտ շենքը, ի սկզբանե 2000-ական թվականներին պատկանել է նույն

սեփականատիրոջը և դեռևս, մինչև 2005 թվականը տրված են եղել քաղաքաշինական փաստաթղթեր, այդտեղ երկու բազմաբնակարան շենքեր կառուցելու համար:
Կառուցապատողը մի շենքը կառուցել է, մյուսի փոսորակը փորված վիճակում, հետագայում 2006-2007թթ. հետո, վաճառել է մեկ այլ սուբյեկտի, որը շարունակել է աշխատանքները մասնակի և սնանկացման պատճառով աշխատանքները վերջին տարիներին չեն իրականացվել:

Բնակիչների կողմից բարձրացված ահազանգերի մասին մենք տեղեկացված ենք: Այն հայտարարությունը, որ այդտեղ շինարարության թույլտվություն չկա, այդպես չէ: Շինարարության թույտվություն եղել է, որը տարբեր ժամանակահատվածներում երկարաձգվել է: Բնակիչների կողմից կան բազմաթիվ բողոքներ, ուստի՝ մենք նոր կառուցապատողին գրավոր նախազգուշացրել ենք, որ բարձրացված հարցերն անհրաժեշտ է նախնառաջ քննարկել իրենց հետ և ըստ այդմ նոր վերահաստատել քաղաքաշինական հետագա գործընթացը:

Այս հարցն մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում է, մենք քայլեր ենք ձեռնարկում, որպեսզի այնտեղ աշխատանքներ չիրականացվեն: Այնտեղ, պարզապես, նոր սեփականատիրոջ կողմից շինանյութի որոշակի կուտակման աշխատանքներ են եղել և որևէ այլ աշխատանք չի իրականացվել:

Տարոն Մարգարյան

-Պարոն Ասատրյան, այս պահին այնտեղ շինարարություն տեղի չի՞ ունենում:

Հայկ Ասատրյան

-Ո՛չ:

Տարոն Մարգարյան

-Երկրորդ հարցին կպատասխանի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը, խնդրե՛մ:

Զավեն Առաքելյան

-Աբովյան փողոցում իրականացվող քաղաքաշինական գործունեության հետ կապված տեղեկացնեմ, որ հարակից շինության սեփականատիրոջ կողմից հայց է ներկայացվել դատարան, որով վիճարկվում է տրված շինարարության թույլտվության իրավաչափություններ: Դրա արդյունքում օրենքի ուժով շինարարության թույլտվությունը համարվել է կասեցված, ինչի մասին Երևանի քաղաքապետարանի համապատասխան ծառայությունների կողմից գրավոր իրազեկվել են երեք համակառուցապատողները: Հաշվի առնելով, որ շինարարությունը դրանից հետո շարունակվել է, սահմանված կարգի համաձայն հարուցվել է վարչական վարույթ և այդ անձինք ենթարկվել են վարչական

պատասխանատվության: Դրանից հետո իրավախախտման փաստի շարունակելիության հետևանքով ևս երկրորդ վարչական վարույթ է հարուցվել: Գործընթացն այժմ ընթանում է և, շինարարությունը չդադարեցվելու պարագայում, օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցներ կկիրառվեն: Կիրականացվեն այն բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք նախատեսված են առանց թույլտվության շինարարությունը շարունակելու դեպքերում:

Տարոն Մարգարյան

-Մեր լիազորությունների շրջանակներում պետք է գործառույթ իրականացնենք, երկու վարչական տույժեր պետք է արձանագրենք, որից հետո, եթե շինարարությունը չդադարեցվի, պետք է դիմենք իրավապահ մարմիններին: Առաջինն արդեն իրականացրել ենք, երկրորդն ընթացքի մեջ է, որից հետո, եթե աշխատանքները չդադարեցնեն, կդիմենք իրավապահ մարմիններին՝ օրենքով սահմանված կարգով հարցին լուծում տալու համար:

Անի Սամսոնյան

-Շնորհակալությու՛ն, երկրորդ հարցի պատասխանն այս պահին ինձ համար պարզ էր, մենք կհետևենք ընթացքին: Ինչ վերաբերում է առաջին հարցին, պարոն Ասատրյանն ասաց, որ շինարարության թույլտվությունը երկարաձգվել է այս ընթացքում: Ասեմ, որ վերջին շինթույլտվությունն այս ընկերությանը տրվել է 2012թ., որից հետո հայտնաբերվել են շատ կոպիտ շինարարական նորմատիվ, տեխնիկական խախտումներ:

Ցանկանում եմ հասկանալ. դա հայտնաբերելուց հետո ինչու՞ է անընդհատ շինարարական թույլտվությունը երկարաձգվել, եթե կառուցապատողը չի շտկել այդ խախտումները: Շնորհակալություն:

Հայկ Ասատրյան

-Կառուցապատողների իրավունքները և պարտականությունները սահմանված են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, իսկ 23-րդ հոդվածը հստակ սահմանում է շինարարության թույլտվության տրման և երկարաձգման հետ կապված կառուցապատողների իրավունքները: Այս պարագայում կառուցապատողին տրված թույլտվության երկարաձգման գործընթացը, դա վարչարարություն է, որը թույլտվություն տվող մարմինը պարտավոր է իրականացնել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի պահանջների տրամաբանությամբ, որն էլ տեղի է ունեցել այս դեպքում: Այս գործընթացը տեղի է ունում բազմաթիվ դեպքերում, երբ կառուցապատողները հայցում են թույլտվության ժամկետի երկարաձգում:

Տարոն Մարգարյան

-Ինչ վերաբերում է այն հարցին, որ ժամանակին շինարարությունն իրականացվել է որոշակի խախտումներով, ինչպես նաև բնակիչների կողմից կան բազմաթիվ բողոքներ, հետագայում այս գործընթացն սկսելու դեպքում այդ ամեն անպայման հաշվի կառնվի:

- Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրե՛մ:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալությու՛ն: Տարօրինակ է, որ պարոն Բաբինյանը նիստին չի մասնակցում՝ լինելով քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ և Երևանում այս պահին ունենալով նման խնդիրներ, բայց հարցս ուղղեմ պարոն Մարգարյան Ձեզ և քաղաքապետի տեղակալ պարոն Օհանյանին: Կարծում եմ, առնվազն տրամաբանական էր այսօրվա իմ արձագանքը՝ կապված պոլիկլինիկաների և քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող բուժհիմնարկների հետ: Սկսեմ Նոր Արեշ պոլիկլինիկայից, որ ամիսներ առաջ ֆիքսեցինք և հայտնի դարձավ իր խոլերիկ ու հակահիգիենիկ լաբորատորիայով, սակայն տնօրենը միայն վերջերս է ազատվել աշխատանքից: Թիվ 16 պոլիկլինիկայի իրադարձությունները, որի տնօրենն աշխատանքից ազատվեց, բայց փոխարենը նշանակել եք ժամանակավոր պաշտոնակատար, ինչը, մեղմ ասած, աշխատակիցների հետ չեք համաձայնեցրել և կարծիք հաշվի չեք առել, ինչի հետևանքով արդեն երկրորդ օրն է բուժանձնակազմը գործադուլ է անում: Այս ամենը կարող է աղետալի լինել բնակչության, աշխատակիցների և մեզ բոլորիս համար:

Թիվ 19 պոլիկլինիկան, իր խայտառակ տնօրենով հանդերձ, ի դեպ, այստեղ առկա իրավիճակը Դավիթ Խաժակյանը նկարագրեց մի քանի բառով, այստեղ ստեղծված իրավիճակն ինձ, անկեղծ ասած, «Չիպոլինո» մուլտֆիլմն է հիշեցնում, երբ բավական չէ տուգանում են, հարկեր են մտցրել շնչելու և արտաշնչելու համար, նաև ավելացնում են տեղումների՝ անձրևի, հորդառատ անձրևի և այլնի համար: Սա լրիվ նմանատիպ իրավիճակ է, այսինքն՝ աշխատանքի ընդունվելու համար 1500-3000 դոլար կաշառք է տրվում, արձակուրդ գնալու համար կարևոր են կոնյակի աստղերը, այսինքն՝ տնօրենն ինքնագլուխ պահումներ է անում: Ի դեպ՝ այս պոլիկլինիկան 2014թ. փետրվարի 11-ի հ.113-Ա որոշմամբ ավագանին հավատարմագրային կառավարման է տրամադրել, պայմանագիր է կնքել, տեղյակ եք պարոն քաղաքապետ պոլիկլինիկան ու՞մ եք տալիս կառավարման: Դուք գիտե՞ք ինչպես է տնօրենը վարվում աշխատակիցների հետ, ինչ գռեհիկ պահվածք է ցուցաբերում, ինչ անօրինություններ է անում: Ճիշտն ասած՝ ուզում եմ ինձ հանգստացնել, համոզել ու մտածել, որ Դուք գուցե այդ մարդու բնույթին ծանոթ չեք և ավագանու որոշմամբ 10 տարով նման մարդու պոլիկլինիկան կառավարելու իրավունք եք տվել: Սա խայտառակություն է և

կոչ եմ անում ավագանու որոշումն անհապաղ ուժը կորցրած ճանաչել, մենք արդեն դիմել ենք դատախազություն և խայտառակությունից նվազագույնս խուսափելու համար խնդրում եմ ավագանու որոշումն ուժը կորցած ճանաչել: Այսօր բազմաթիվ բուժհաստատություններում բողոքների ալիք է բարձրացել, կասեք ինչո՞վ է զբաղված քաղաքապետարանը, որ նմանատիպ իրավիճակ է ստեղծվել:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանը:

Դավիթ Օհանյան

-Շնորհակալությու՛ն, նախ ցանկանում եմ, որ հարգենք անմեղության կանխավարկածը, այն ինչ Դուք հայտարարում եք, կարծում եմ իրավապահ մարմինները կընդունեն ի գիտություն և մարդը մեղավոր կճանաչվի միայն դատավճռից հետո, կարծում եմ դա միայն Ձեր կարծիքն է: Ինչ վերաբերում է թիվ 16 պոլիկլինիկային, տնօրենը աշխատանքից ազատվելու դիմում է ներկայացրել և մինչև թափուր տեղի մրցույթի հայտարարելը, Եևանի քաղաքապետի կողմից նշանակվել է ժամանակավոր պաշտոնակատար: Դուք ասում եք ամբողջ բուժանձնակազմը, ես ինքս երեկ այնտեղ եմ եղել, ընդամենը երեսուն հոգի խնդրում են, որ տնօրեն նշանակվի Ելենա Հավսեփյանը, ով նախկինում եղել է տնօրենի տեղակալ և երկու տարի առաջ ազատվել է աշխատանքից: Կխնդրեմ, որ Դուք ինքներդ պարզեք, ինչու՞ է նա ազատվել տնօրենի տեղակալի պաշտոնից և այսօր զբաղեցնում է ինֆեկցիոնիստի պաշտոն: Ըստ էության՝ այնտեղ բոլոր բուժաշխատողներն իրենց բնականոն աշխատանքին են, ընդամենը երեսուն մանկաբույժ փորձում է իր կամքը թելադրել: Ինչ վերաբերում է թիվ 19 պոլիկլինիկային, Դուք գիտեք, որ այդ հիմնարկը տրվել է կառավարման ավագանու որոշմամբ և պայմանագրով նախատեսված բոլոր գործառույթները վարձակալն իրականացրել է պատշաճ մակարդակով: Այսինքն՝ երեք հարյուր քսան միլիոն դրամի ներդրումային ծրագիր է վերցրել, որից երկու հարյուր քառասունհինգ միլիոն դրամն արդեն ներդրված է, կա նաև աուդիտի եզրակացությունը և յոթանասունհինգ միլիոն դրամ մինչև տարեվերջ կիրականացնի: Ինչ վերաբերում է նրանց գործառույթներին, ապա պայմանագրով մեզ ինչ վերապահված է, մենք պարտաճանաչ իրականացրել ենք: Այսքանը:

Տարոն Մարգարյան

-Ավելացնեմ, որ թիվ 16 պոլիկլինիկայի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթը հայտարարվելու է բաց, բոլորն էլ կարող են մասնակցել: Ինչ վերաբերում է ժամանակավոր պաշտոնակատար նշանակելուն, ապա ժամանակավոր պաշտոնակատար նշանակվում է, որպեսզի համապատասխան աշխատավայրում գործընթացը չխաթարվի մինչև մրցույթի

անցկացումը: Մրցույթի արդյունքում հաղթողը, մրցութային հանձնաժողովի կողմից հաստատվելու դեպքում, կնշանակվի տնօրեն: Կրկնեմ, որ ժամանակավոր պաշտոնակատար նշանակվում է, որպեսզի աշխատանքային գործընթացը չդադարի, աշխատողներն ամսվա վերջում ստանան իրենց աշխատավարձը, իսկ հիվանդներն էլ պետության կողմից տրվող դեղորայքը և այդ ամենի համար պատասխանատվություն կրի այն աշխատակիցը, ում Երևանի քաղաքապետը ժամանակավոր պաշտոնակատար է նշանակել:

Ինչ վերաբերում է թիվ 19 պոլիկլինիկային, մենք նշանակման ժամանակ հաշվի չենք առնում անձը, այլ՝ ներկայացվող ներդրումային ծրագիրը և այդ պարագայում ծրագիրն իրականացնողը, տվյալ դեպքում տնօրենը, կարող է ժամանակի ընթացքում փոխվել և մեր պարտավորությունների մեջ չի մտնում հսկել, թե ինչ անձնակազմով է նա աշխատում: Քաղաքացիների բողոքների և դժգոհությունների դեպքում պարտավոր ենք և դիմել ենք կառավարչին, որպեսզի դժգոհությունների պատճառներն ուսումնասիրեն, շտկեն և նորմալ սպասարկեն ազգաբնակչությանը: Դուք ասում եք, որ դիմել եք դատախազություն, խնդրեմ, սպասենք դատախազության պատասխանին և ըստ այդմ էլ կորոշենք չեղյալ համարել այդ որոշումը, թե՝ ոչ: Չմոռանանք, այն պարտավորությունները, որոնք նրանք ստանձնել են և կատարում են: Ուղղակի պետք է վերահսկել և լինել հետևողական:

Թեհմինա Վարդանյան

-Պարոն քաղաքապետ, թույլ տվեք Ձեզ հետ չհամաձայնել այն մասով, որ նշանակվել է ժամանակավոր պաշտոնակատար և այդ արդյունքում գործընթացները պոլիկլինիկայում մինչև մրցույթ հայտարարելն ու որոշում ընդունելն այնտեղ բնականոն հունով է աշխատանքն ընթանում: Ո՛չ, դա բացարձակ չի համապատասխանում իրականությանը: Պարոն Օհանյան, Դուք նշեցիք, որ եղել եք պոլիկլինիկայում, այնտեղ երեսուն մանկաբույժ է: Չգիտեմ որքանով եք տեղեկացված, բայց տվյալ պոլիկլինիկա մեր նախորդ այցի ժամանակ պարզվեց, որ մանկաբույժը համատեղության կարգով նաև ֆիզիոթերապևտ է, միակն է, այսինքն՝ ֆիզիոթերապիայի բաժինը, ըստ էության, չի աշխատում: Մանկաբույժը, համատեղության կարգով, սրտաբան է, այսինքն՝ կարդիոլոգիան չի աշխատում: Դուք հիմա ասում եք երեսուն մանկաբույժ, նախ՝ երեսուն չէ, ավելի շատ են: Կա 110 ստորագրություն, որով դիմել են Ձեզ և վերջիվերջո մարդիկ բողոք ունեն, կարող եք կոնսեսուսային որևէ որոշում կայացնել: Պետք չէ գնալ օրվա մեջ հինգ րոպե երևալ, մոտավորապես լսել և պոլիկլինիկայի տնօրենն ասում էր, որ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը որոշել է, որ ես եմ, ուրեմն ես եմ: Երեկ արդեն հասցրել է մատ թափ տալ աշխատակիցների վրա, բղավել, եթե Ձեզ համար նորմալ է ժամանակավոր պաշտոնակատարի նման պահվածքը, ինձ և ինձ նման շատ-շատերի համար դա անընդունելի է: Խնդրում եմ գտեք կոնսեսուսային

որոշում: Ինչ վերաբերում է հրահրելուն, պարոն Խաժակյանի ելույթի ժամանակ ասացիք, տասն օր շարունակ քաղաքացիները մեզ բողոքել են, մենք որևէ բան հրահրելու ոչ կարիք ունենք, ոչ ներկայացում սարքելու եղանակներ ենք մտածել և նույնը վերաբերում է թիվ 19 պոլիկլինիկային:

Շաբաթ օրը պարոն Խաժակյանի հետ հանդիպել ենք թիվ 19 պոլիկլինիկայի աշխատակազմի թվով 20-25 հոգու հետ, որոնցից շատ-շատերը երեկ լրագրողների առաջ ուղղակի վախեցան, խուճապահար եղան և չբարձրաձայնեցին այն խնդիրների մասին, որոնք կան: Դա չի նշանակում, որ այդտեղ չկան լուրջ խնդիրներ: Ունեցել ենք խնդիրներ նաև Դավթաշենի թիվ 20 պոլիկլինիկայում, որտեղ գրեթե նույն իրավիճակն էր, բայց այս պահի դրությամբ փորձում ենք որոշ հանգամանքներ պարզել, որովհետև բուժաշխատակիցները, ովքեր ստորագրել էին դիմումը, ասել էին, որ չեն իմացել ինչի տակ են ստորագրել: Այսինքն՝ մի աշխատակից է, հիմա Ձեր տրամաբանությամբ, եթե մենք հրահրում ենք և շոու ենք սարքում, ինչու նույն շոուն չենք սարքում թիվ 20 պոլիկլինիկայում: Այսինքն՝ կա ակնհայտ լուրջ բացթողումներ և շատ սխալ է, որ այսօր նիստին չի մասնակցում պարոն Բաբինյանը, իհարկե տրամաբանական էր: Շնորհակալ եմ:

Դավիթ Օհանյան

-Արձագանքեմ, ուրեմն Ձեր խմբակցության անդամը, երբ գնացել է թիվ 20 պոլիկլինիկա, ներկայացրել է նորից ստորագրություններ, իբրև Ձեզ ուղղված: Կգնանք տեղում կպարզենք այդ ստորագրությունները Ձեզ է ուղղված, թե ուրիշ ատյանի: Երկրորդը, երբ ասում եք, որ ձեր ձեռքին 110 ստորագրություն կա, կխնդրեմ նիստից հետո գնանք պոլիկլինիկա:

Թեհմինա Վարդանյան

-Ո՛չ, մեր ձեռքում չեն այդ ստորագրությունները, այլ պարոն Խաժակյանի հեռախոսում:

Դավիթ Օհանյան

-Միասին գնանք պոլիկլինիկա և պարզենք այդ մարդիկ ինչի տակ են ստորագրել:

Թեհմինա Վարդանյան

-Այո՛, իսկ ինչպես կմեկնաբանեք համատեղության կարգով ֆիզիոթերապևտ-մանկաբույժ կամ մնացյալը:

Դավիթ Օհանյան

-Կուսումնասիրենք:

Թեհմինա Վարդանյան

-Դուք ասում եք միայն մանկաբույժներ են: Մեր նախորդ այցի ժամանակ, դրա տեսաձայնագրությունն էլ կա, որ նախկին տնօրենը հստակ ասում է. «Այո՛, մեզ մոտ ֆիզիոթերապևտը կիսում է հաստիքը մանկաբույժի հետ», այսինքն՝ դրանք ավելորդ հաստիքներ են, որը գրպանել է նախկին տնօրենը:

Տարոն Մարգարյան

-Քաղաքապետի տեղակալն ասաց, որ պատրաստ է Ձեզ հետ լինել տեղում և հասկանալ, թե ստորագրություններն ինչի համար են հավաքվել, և արդյոք կոլեկտիվը տեղյակ է եղել այդ ստորագրությունների մասին:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Գրիգոր Մինասյան, խնդրե՛մ:

Գրիգոր Մինասյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, այսօր մայրաքաղաքի մի շարք փողոցներում առկա են ճանապարհային երթևեկության նշաններ, որոնք վնասված են:

Ի՞նչ աշխատանքներ են տարվում քաղաքապետարանի կողմից այդ նշանները վերականգնելու կամ նորերով փոխարինելու ուղղությամբ:

Տարոն Մարգարյան

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը, խնդրե՛մ:

Հենրիկ Նավասարդյան

-Շնորհակալությու՛ն, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, որ այս գործառույթների հետ կապված որպես լիազոր մարմին հանդիսանում է ՀՀ ոստիկանությունը: Երևանի քաղաքապետարանն այդ գործառույթներին մասնակցում է: Քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցությունների ժամանակ, պարոն Մարգարյանի կողմից տրված է հանձնարարական վարչական շրջանների ղեկավարներին, քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչությանը և համապատասխան կառույցներին, որպեսզի մշտապես հետևողական լինեն այս նշանների, գծանշումների, նոր նշանների տեղադրման և վնասված նշանների վերականգման ուղղությամբ:

Յուրաքանչյուր շաբաթ, մեր կողմից ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված այդ նշանների ցուցակը տրվում է ճանապարհային ոստիկանությանը: Մենք էլ մեր կողմից հետևում ենք, որպեսզի դրանք վերանորոգվեն կամ փոխարինվեն նոր

նշաններում: Պարոն քաղաքապետին յուրաքանչյուր շաբաթ զեկուցվում է կատարված աշխատանքների մասին:

Տարոն Մարգարյան

- Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրե՛մ:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալությու՛ն, հարցադրումս կրկին վերաբերում է թիվ 16 պոլիկլինիկային, որովհետև, ըստ էության, կա թյուրըմբռնում և չգիտեմ, թե այդ թյուրըմբռնումը մինչև ուր է հասնում: Խնդիրը հետևյալն է՝ քիչ առաջ հնչեց պնդում, որ աշխատակիցները տեղյակ չեն եղել, թե ինչի տակ են ստորագրել:

Այո՛, այս պահին այնտեղ կանգնած են շուրջ մանկաբուժական բաժանմունքի 30 աշխատակիցներ, բայց ստորագրահավաքին մասնակցել են ավելի քան 110-ը և այդ ստորագրահավաքի լուսանկարները ես ունեմ:

Ստորագրել են հետևյալի ներքո՝ նամակ-ուղերձ Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետին. «Մենք՝ թիվ 16 պոլիկլինիկայի ներքոստորագրյալներս, դիմում ենք Ձեզ, հետևյալ խնդրով. ելնելով ստեղծված իրավիճակից՝ ցանկանում ենք մեր պոլիկլինիկայի տնօրենի պաշտոնում տեսնել մեր աշխատակից, նախկինում փոխտնօրեն, ներկայումս՝ որպես վարակաբան աշխատող Լենա Գուրգենի Հովսեփյանին: Հուսով ենք, որ մեր խնդրանքը չի մերժվի: Նախապես հայտնում ենք մեր շնորհակալությունը»: Այս նամակ-ուղերձի ներքո առկա են շուրջ 110 ստորագրություն:

Վստահ եմ այդ դիմումը հասել է թե՛ ոլորտը համակարգողին և թե՛ Ձեզ, պարոն քաղաքապետ: Այստեղ կա ողջամիտ կասկած. պարոն Օհանյանը քիչ առաջ հայտնեց, որ մարդիկ չեն իմացել ինչի տակ են ստորագրել: Ես կրկին դիմում եմ իրավապահներին՝ պարոն Օհանյանի արտահայտած պնդումը ողջամիտ կասկած համարելով: Եթե այդ ստորագրությունները դրվել են ոչ իմացությամբ կամ, նույնիսկ, եղել է որոշակի մեքենայացում, ապա թող պարզեն իրենք: Եթե ոչ, ապա մենք պետք է արձանագրենք, որ առկա է 110 ստորագրություն և տվյալ աշխատակիցներն ունեն իրավունք իրենց առաջադրած թեկնածուին տեսնել տնօրենի պաշտոնում:

Հարցս վերաբերում է և՛ թիվ 16 պոլիկլինիկային, և՛ թիվ 19 պոլիկլինիկային: Պարոն Օհանյանը պնդում է, որ դրանով զբաղվեն իրավապահները: Հարցադրումս հետևյալն է. ինչքա՞ն և ինչպիսի՞ նման բացահայտումներ պետք է լինեն, որ այդ հարցով զբաղվի Երևանի քաղաքապետարանը և այդ բացահայտումները չթողնի իրավապահների կամ ավագանու անդամների վրա: Սա առաջին հարցս:

Տարոն Մարգարյան

- Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանը, խնդրե՛մ:

Դավիթ Օհանյան

-Մենք պարբերաբար ուսումնասիրություններ ենք անցկացրել պոլիկլինիկաներում և նման թերություն չենք հայտնաբերել: Հիմա, եթե հայտնաբերվել է, թող այդ հարցով զբաղվեն իրավապահ մարնիները: Ինչ վերաբերում է Ձեր կողմից բարձրացված 110 ստորագրության հարցին, առաջարկում եմ միասին գնալ և ճշտումներ կատարել տեղում:

Դավիթ Խաժակյան

-Շատ բարի, եթե կա ցանկություն, որ այդ գործադուլը շարունակվի, ես դա չեմ ցանկանում, բայց աշխատակիցները վճռական են տրամադրված:

Միանգամից ուղղեմ երկրորդ հարցս: Մեկ շաբաթ առաջ, ոստիկանությունը տարածեց հետևյալ հայտարարությունը. պարզվել է, որ 2016-2018թթ. ընթացքում, վերոհիշյալ ընկերությունը՝ «Յունիգրաֆ-իքսը», Երևանի քաղաքապետարանի կողմից ստացել է շուրջ 267.000.000 ՀՀ դրամ:

Այդ ժամանակահատվածում, ընկերությունը ձեռք է բերել 128 տ հավի միս, մինչդեռ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ փաստացի օգտագործվել է 12.6 տ: Ձևակերպվել է 206 տ բրինձի ձեռքբերում, պարզվել է, որ փաստացի օգտագործվել է 8.4 տ, իսկ ձևակերպված 25 տ խոզի միսը՝ ընդհանրապես չի օգտագործվել: Արդյունքում՝ յուրացվել է 185.000.000 ՀՀ դրամ: Մենք խոսեցինք պոլիկլինկաներում եղած չարաշահումների մասին, թիվ 11 դպրոցի տնօրենի կողմից իրականացվող չարաշահումների մասին:

Հարցադրումս հետևյալն է. եթե այս բացահայտումները պետք է անեն ավագանու անդամները, ծնողները, ուսուցիչները, բուժաշխատողները, եթե սրան պետք է ընթացք տա անմիջապես ոստիկանությունը, ինչի՞ համար են քաղաքապետարանի ենթակայության ներքո այս կառույցները:

Առհասարակ, ինչպե՞ս է ստացվում, որ քաղաքապետարանի վերահսկողական լիազորությունները չեն իրականացվում և քաղաքապետարանը միջամտում է միայն այն ժամանակ, երբ ոստիկանությունն արդեն բացահայտումներ է կատարում կամ դատախազությունը նյութեր է իրականացնում: Ինչու՞ այս վերահսկողությունը չի կատարվում:

Տարոն Մարգարյան

-Ձեր հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը, խնդրե՛մ:

Վահե Նիկոյան

-Շնորհակալություն՛ն, ինչ վերաբերում է «Յունիգրաֆ-իքս»-ի և քաղաքապետարանի միջև կնքված պայմանագրին՝ դուք տեղյակ եք, ինչպես նաև ավագաու բոլոր խմբակցություններն ունեն ներկայացուցիչ, թափառող կենդանիների վնասազերծման համար ծառայությունների ձեռքբերման գնման գործընթացում: Գնման գործընթացն իրականացվել է թափանցիկ, տեխնիկական բնութագիրը քննարկվել է ավագանու խմբակցությունների հետ:

«Ելք» խմբակցությունը նույնպես ունեցել է ներկայացուցիչ այդ հանձնաժողովում: Գնման գործընթացով բաց նպատակային մրցույթի արդյունքում, կնքվել է պայմանագիր: Պայմանագրի շրջանակներում մատուցվել են ծառայություններ, որոնք հստակ ներկայացված էին բնութագրում: Քանի որ, դուք տեղյակ եք, շատ չմանրամասնեմ: Ծառայությունները հստակ վերաբերում էին կենդանիների վնասազերծմանը, իսկ ծառայությունների վճարումն իրականացվում է ըստ վնասազերծված կենդանիների թվի:

Պատասխանատու ստորաբաժանումը, որը նախատեսված է պայմանագրով, իրականացրել է հսկողություն վնասազերծված կենդանիների թվի նկատմամբ և ընդունել է աշխատանքները, որի դիմաց իրականացվել է վճարումը: Ձեր ներկայացրած խնդիրներին քաղաքապետարանը տվել է դիրքորոշումը. որ դա վերաբերում է տվյալ կազմակերպության ներքին խնդիրներին և տվյալ պարագայում՝ նրա ձեռքբերումների վերաբերյալ, համենայն դեպս, պայմանագրով վերահսկողություն իրականացնելու լիազորություն քաղաքապետարանը չունի:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն՛ն, պարոն Նիկոյան: Ոստիկանության հայտարարության մեջ բառացի նշված է, որ վերոհիշյալ ընկերությունը Երևանի քաղաքապետարանից ստացել է այսքան միլիոն դրամ և դա, այդ կապը տրվել է այս չարաշահման հետ: Հիմա մենք, փաստորեն, պետք է ոստիկանությունից էլ պարզենք, թե որքանո՞վ են մանրակրկիտ կազմել իրենց հայտարարությունը:

Դուք ճիշտ նշեցիք, որ «Ելք» խմբակցությունից ևս ներգրավված է եղել անդամ, ով դեմ է քվեարկել դրան: Գործընթացն այդ օրը կանգ է առել, քանի որ նա հիմնավոր կերպով ներկայացրել էր, որ ներկայացվող ստերջացման ենթակա շների և փաստացի քանակի մեծ տարբերություն կա: Եվ, ի վերջո, այդ մրցույթը կայացել է: Հենց այդ գումարն է չարաշահվել, թե այլ գումար, պարզ չէ, բայց ամեն դեպքում, որ մենք դրա մասին խոսել ենք՝ միանշանակ է: Ցանկանում եմ, որ պատասխան տրվի իմ ներկայացրած մյուս դեպքերին: Դպրոցների, պոլիկլինիկաների տնօրեններ. այս կոնտեքստում ինչպե՞ս անենք, որ ես, որպես ավագանու անդամ, ռևիզիայի չգնամ դպրոց կամ պոլիկլինիկա, ինձ դիմեն, ես ասեմ,- գիտեք,

կա մի պատկան մարմին, որ Ձեր խնդիրը կլուծի: Ինչպե՞ս անենք, որ ավագանու անդամն ստիպված ռևիզորի չվերածվի և այդ գործունեությունն իրականացնի քաղաքապետարանը:

Տարոն Մարգարյան

-Շատ բարի: Պարոն Խաժակյան, եթե Դուք ընդամենը մի քանի դպրոց և քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մի քանի կառույցներ եք այցելել, որոշակի դժգոհության և բողոքների հիման վրա, չմոռանանք՝ քաղաքապետարանում կա աշխատակազմ, որի ամենօրյա աշխատանքն է դա և մենք ամեն օր, թե՛ բողոքների, թե՛ դժգոհությունների, մատուցած ծառայությունների ստուգման նպատակով այցելություններ ենք կատարում: Մատուցման ծառայությունների պայմանագրերն են խզվում, տնօրեններ են ազատվում աշխատանքից: Հանրակրթության վարչության պետից կարող եք հետաքրքրվել, թե այս տարվա ընթացքում քանի՞ դպրոցների, մանկապարտեզների կամ այլ հիմնարկների տնօրեններ են ազատվել աշխատանքից: Այն տպավորությունը մի ստեղծեք, որ դուք սրտացավ եք, իսկ մենք՝ ոչ: Մենք պատասխանատվություն ենք կրում և դա անընդհատ պրոցես է՝ վերահսկել, դժգոհությունների հետևից գնալ, տեր կանգնել և խնդիրը լուծել: Եվ լուծելուց հետո մենք դրոշակ չենք վերցնում և թափահարում, թե այս խնդիրը լուծեցինք՝ ի տարբերություն Ձեզ:

- Հաջորդ հարցը՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Արմեն Երեմյան, խնդրե՛մ:

Արմեն Երեմյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հաշվի առնելով, որ մայրաքաղաքում տեղումների շրջան է, որի հետևանքով փողոցների որոշ հատվածներում առաջանում են ջրերի կուտակումներ, խնդրում եմ ներկայացնել Երևանի վարչական տարածքում առկա հեղեղատար համակարգերի մաքրման աշխատանքների ընթացքը:

Տարոն Մարգարյան

-Ձեր հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանը, խնդրե՛մ:

Կամո Արեյան

-Շնորհակալություն, համաձայն ՀՀ կառավարության և «Վեոլիա ջուր» ընկերության միջև կնքված գույքի 15 տարով վարձակալությամբ տրված պայմանագրի, մայրաքաղաքում շուրջ 300 կմ հեղեղատար համակարգը շահագործման, սպասարկման է հանձնված «Վեոլիա ջուր» ընկերությանը: Կառավարության կողմից լիազորված մարմինը, որն ստորագրել է պայմանագիրը, հանդիսանում է Ջրային տնտեսության պետական կոմիտեն:

Այսօրվա դրությամբ մայրաքաղաքում առկա անձրևընդունիչ հեղեղատար ջրահեռացման համակարգն ամբողջովին հանձնված է որպես սպասարկվող գույք «Վեոլիա ջուր» ընկերության սպասարկմանը: Ընկերությունը պարբերաբար պարտավոր է իրականացնել այդ համակարգի սպասարկումը, շահագործումը, մաքրումը: Մայրաքաղաքում վերջին շրջանում, մասնավորապես՝ մայիսի 23-ին և 26-ին տեղացած հորդառատ անձրևներից հետո որոշակի ջրականգեր եղել են թունելային տրանսպորտային հանգույցներում: Մեկը պայմանավորված է եղել աշխատող պոմպի հոսանքազրկմամբ, որի պատասխանատուն Հայաստանի էլեկտրական ցանցերն էր, սնման կետից անորակ հոսանքի տատանման պատճառով կանգնել էր պոմպը Բաբաջանյան փողոցի և Արգավանդի խաչմերուկի հանգույցում:

Երկրորդը եղել է Սեբաստիայի փողոցը և Բագրատունյաց պողոտան իրար կապող կամրջի հատվածում, Իսակովի պողոտայում, Գյուրջյան փողոցում: Մշտապես կախված այս հարցն այսօր ևս բարձրաձայնվեց՝ մեղադրանք ուղղելով Երևանի քաղաքապետարան, առանց տարրական գիտելիքներ ունենալու, գոնե մասնագետից խորհրդատվություն հարցնելուց հետո նոր արտաբերել որոշակի մտքեր և արտահայտություններ, քննադատելու անհասցե: Համակարգն իր թողունակությամբ գերակշիռ մասը կառուցվել է խորհրդային տարիներին, հաշվի չեն առնվել քաղաքաշինական այն բարելավումները, որ պետք է իրականացվեին քաղաքում, սա մեկ: Նորակառույց ամբողջ համակարգը կառուցվում է ժամանակակից նորմատիվներով և համապատասխան թողունակությամբ: Ճանապարհաշինության վերջին ծրագրերով ներքաղաքային և շրջանցող ճանապարհահատվածների ամբողջ համակարգը կառուցված է ժամանակակից նորմատիվներին համապատասխան թողունակությամբ:

Ինչ վերաբերում է որոշակի վերակառուցումներին, ինչպես ձեզ արդեն հայտնի է, բազմիցս այս թեմայով հանդես եմ եկել հայտարարությամբ ավագանու նիստի ժամանակ, քաղաքապետի նախաձեռնությամբ խրոնիկ խնդիր ունեցող վայրերին տրվեց վերջնական լուծում: Վերջինը եղավ այս տարի, հունվարից սկսեցին աշխատանքները և ապրիլի սկզբին արդեն վերակառուցվեց Գրիգոր Լուսավորչի փողոցի տրանսպորտային հանգույցի հեղեղատար համակարգը, որը ժամանակին կառուցվել էր ոչ համապատասխան չափերի:

Մյուս օբյեկտիվ հանգամանքը, որը կցանկանայի ներկայացնել, քանի որ մեզ լսում են շատ երևանցիներ, կա հստակ մասնագիտական բացատրություն. ինչքան բարեկարգվում է քաղաքը, այնքան մեծանալու են մակերևույթային ջրերի քանակը: Բակեր, մայթեր, պուրակներ, գրունտային տարածքներն ինչքան ասֆալտապատվում են, այնքնան եղած

անձրևաջրերը տեղ չունեն ներծծվելու, դրանք դառնում են մակերևութային ջրեր և անցնում անձրևատար համակարգով, սա օբյեկտիվ բացատրությունն է:

Ինչ վերաբերում է հարցի մյուս կողմին, ես ունեմ հիդրոմետի պաշտոնական տվյալները, որի վերաբերյալ պարոն Մարգարյանին զեկուցել եմ. մայիսի 23-ին տեղացել է 20 րոպեում 22մմ, իսկ ամսական նորման 60մմ է, 20 րոպեում 1/3-ից ավելի տեղումներ են տեղի ունեցել: Մայիսի 26-ին ամենաշատն ընդգրկվել են Մալաթիա-Սեբաստիա և Աջափնյակ վարչական շրջանները, ընդամենը 10 րոպեում տեղացել է մոտ 15մմ, 1/4-ը ամսական մագնիսական նորմայի: Բնականաբար՝ շատերին շատ դուր եկան, շատ հասկանալի էին եվրոպական քաղաքում հորդառատ անձրևը, հորդառատ անձրևից հետո առաջացած ջրերը, շատ հասկանալի են այլ քաղաքներում հեղեղումները: Շատ կցանկանայի մարդիկ մի փոքր էյֆորիկ այս վիճակից դուրս գան, ավելորդ հռետորաբանությունից մի քիչ սթափ ձեռբազատվեն և հասկանան, որ այո՛ հեղեղումների, նորմայից ավել տեղումների դեպքում կարող են առաջանալ նման խնդիրներ և դրանք անխուսափելի են:

Սպառիչ պատասխանելով Ձեր հարցին, շնորհակալ եմ հարցի համար, այս համակարգի սպասարկման, պահպանման, շահագործման ողջ պատասխանատվությունը վարձակալության պայմանագրով տրված է «Վեոլիա ջուր» ընկերությանը, և նա պետք է կրի պատասխանատվություն ամենօրյա պահպանման, շահագործման՝ վատ շահագործման պատճառով անհարմարություններ չստեղծելով բնակչի համար:

Ինչ վերաբերում է քաղաքապետարանին, ապա վերջինս միայն աջակցում է այս գործընթացին, որպես գործընկեր, որպես շահառու համայնքի ներկայացուցիչ:

Տարոն Մարգարյան

- Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրե՛մ:

Անի Խաչատրյան

-Ընդմիջումից առաջ, այս դահլիճում նստած անձանցից մեկը, ակնհայտ կասկածի տակ էր դնում իմ տեղեկատվությունը, իրեն թույլ տվեց զրպարտել և 50 ստորագրությունները կասկածի տակ դնել, որի կրկնօրինակները հիմա կտրամադրեմ Ձեզ: Այսուհետ՝ զգուշացնում եմ, որ որևիցե մեկը չփորձվի հաջորդ անգամ իմ խոսքը կամ տեղեկատվությունը կասկածի տակ դնել, առավել ևս դուք պարոն Օհանյան: Կրկնօրինակները հիմա Ձեզ կներկայացնեմ և կանդրադառնամ հարցերին:

Տարոն Մարգարյան

-Տիկի՛ն Խաչատրյան, լավ կլինի հարգալից վերաբերվենք իրար նկատմամբ: Խնդրեմ հնչեցրեք Ձեր հարցերը:

Անի Խաչատրյան

-Պարո՛ն Նիկոյան, ամիսներ առաջ, այս դահլիճում Մոսկովյան փողոցի հիմնանորոգման հարցն էինք քննարկում, երբ համոզիչ պնդում էիք, որ փողոցն ունի հիմնանորոգման կարիք, իհարկե մենք չհամոզվեցինք և դեմ քվեարկեցինք, լավ իմանալով փողերի մխսման սխեման և հիմա հարց եմ տալիս Ձեզ, դուք տեսե՞լ եք այդ հիմնանորոգումը: Դուք տեսե՞լ եք Պուշկինի դպրոցի հարակից տարածքը: Հիմնանորոգում ասվածը ի՞նչ էր պարունակում իր մեջ, որ սալահատակը հանում ենք և փոխարենը ասֆալտից կցոններ եք տեղադրում: Դուք տեսել եք ի՞նչ խայտառակ տեսք ունի այդ տարածքը: 222.000.000-ը իր մեջ ի՞նչ էր պարունակում: Պարունակում էր սալահատակը հանել և ասֆալտով կցոններ անել: Ի՞նչ է եղել այդ 222.000.000-ի հետ: Սա նորոգում էր, թե՞ բյուջետային գումարի վատնում էր կոռուպցիոն հերթական սխեմաների մեջ: Դուք ասացիք, որ թեքահարթակներ են կառուցվելու, քանի՞սն են կառուցվել պարոն Նիկոյան:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը, խնդրեմ:

Վահե Նիկոյան

-Կարձագանքեմ մասնագիտական առումով և Ձեր կողմից հնչեցված մեղադրանքներում եթե կան որևէ փաստեր, խնդրեմ հրապարակեք: Սխեմաների մասին եք խոսում, լուսաբանեք իմանանք ինչ սխեմաների մասին է խոսքը: Աշխատանքները նախատեսվել են սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Ինչ վերաբերում է այդ ծրագրին, այն իր մեջ չի ներառել մայթերի ամբողջական նորոգում և ոչ էլ փողոցի, ինչպես ծրագիրը ներկայացնելիս ասել եմ և կոնկրետ մայթերի պարագայում, եթե Դուք խայտառակ եք համարում, հին, միմյանցից տարբերվող սալահատակները փոխարինել ասֆալտապատ մայթային տարածքով, կարծում եմ մասնագիտական գնահատման կարիք ունի: 222.000.000 ներդրումային ծրագիրը իրականացվել է թափանցիկ, բաց մրցույթի արդյունքում, որի գնման արժեքը, եթե չեմ սխալվում, կազմել է 175.000.000 դրամ մրցույթի արդյունքում տարբեր մասնակիցներով և դրանք բոլորը հրապարակված են: Էմոցիոնալ գնահատել մասնագիտական աշխատանքները ես կարծում եմ զուտ հնչեցնելու նպատակ ունեն և եթե ոչ, մենք միշտ պատրաստ ենք քննարկման և եթե ավելի լավ առաջարկ ունեիք, այդ հնարավորությունն ունեցել էիք վերջին ամիսներին, և մենք միշտ բաց ենք եղել առաջարկներ լսելու համար: Բայց դա մասնագիտական աշխատանք է, իրականացվել է լիցենզավորված նախագծողի կողմից, անցել է սահմանված կարգով փորձաքննություն:

Անի Խաչատրյան

-Պարո՛ն Նիկոյան, նորոգումը դա սալահատակը հանել և տեղը ասֆալտով կցոններ անե՞լն է: Ես ասում եմ, գնացեք և տեսեք Պուշկինի դպրոցի հարակից տարածքը, Մոսկովյան փողոցի Տերյան-Աբովյան հատվածը զուտ վիզուալ խայտառակ, անհարմար տեսք ունի քաղաքի կենտրոնի համար: 222.000.000-ով չէին վերանորոգում, ինչ-որ ասֆալտապատում անում:

Վահե Նիկոյան

-Նախ, աշխատանքները դեռ ավարտված չեն վերջնական գնահատական տալու համար, առավել ևս մայթերում, բնականաբար՝ աշխատանքներն ավարտելուց հետո մենք միշտ էլ այցելում ենք և տեղում ընդունում ենք, եթե թերություններ լինում են, շտկում ենք: Ձեր ճաշակով եթե ավելի լավ տարբերակներ կան 222.000.000-ով, խնդրեմ՝ այդ տարբերակները ներկայացրեք, թե 222.000.000-ով ի՞նչ է վերանորոգվում և ի՞նչ ճաշակով: Համենայն դեպս, իմացեք, որ կա ընթացակարգ, ինչպե՞ս են իրականացվում փողոցների նորոգումները և այդ ընթացակարգը օրենքի տառին համապատասխան կատարված է:

Անի Խաչատրյան

-Թեքահարթակների մասին չասացիք:

Վահե Նիկոյան

-Ասացի, դեռ աշխատանքները չեն ավարտվել:

Անի Խաչատրյան

-Հիմա երևի թե հարց չէ, այլ որպես զգուշացում տիկին Ստեփանյանին, երբ Ձեզ զանգահարում և ասում են, որ դպրոցի հետ կապված հրատապ խնդիր կա և վաղն այդ դպրոցում անօրինական քննություն է լինելու, և Ձեր աշխատակիցը պատասխանում է, որ Դուք աշխատասենյակում չեք, գրում է համար և կզանգահարի Ձեզ, ասում են՝ իհարկե, դրանից անցել է արդեն 10 օր, պարտավոր եղեք արձագանքել, 5-րդ և 6-րդ դասարաններում քննություն նշանակելու համար էի զանգահարել, որ մյուս օրն առավոտյան լինելու էր, Ձեր աշխատակիցը փոխանցեց, պարտավոր եղեք գոնե արձագանքել:

Տարոն Մարգարյան

-Աշխատանքները կազմակերպեք օպերատիվ՝ ավագանիների և աշխատակազմի հետ միասին: Տիկին Խաչատրյան Դուք աշխատակազմին պարտադրելու լիազորություն չունեք, սա քաղաքապետարանի աշխատակազմն է և ավագանու անդամը քաղաքապետարանի աշխատակազմին պարտադրելու և պահանջեր ներկայացնելու իրավունք չունի: Իմ կողմից աշխատակազմին հանձնարարվել է, որ ավագանու բարձրացված հարցերին լինել ուշադիր և

ակտիվ համագործակցել: Նման խնդիր ունենալու դեպքում Դուք տիկին Ստեփանյանի հետ առանձին քննարկեք:

Անի Խաչատրյան

-Պարո՛ն քաղաքապետ, իսկ քաղաքացին պարտադրելու իրավունք ունի՞:

Տարոն Մարգարյան

-Քաղաքացին՝ այո:

Անի Խաչատրյան

-Իսկ մենք, այդ քաղաքացիների ներկայացուցիչներն ենք:

Տարոն Մարգարյան

-Դուք մնացեք ձեր լիազորությունների շրջանակում:

Հաջորդ հարցը՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Աննա Ասատրյան, խնդրե՛մ:

Աննա Ասատրյան

-Մեծարգո՛ պարոն քաղաքապետ, հարգարժա՛ն գործընկերներ, նախքան հարցիս անդրադառնալը՝ ունեմ մեկ խնդրանք ու մեկ առաջարկ:

Խոսքս ուղղում եմ միկրոֆոնի մեջ գոռգոռացող մեր գործընկերներին: Խնդրում եմ՝ մի բղավեք: Հանգիստ խոսեք, մենք կլսենք: Սա Երևանի օրենսդիր մարմնի նիստն է, սա հանրահավաք չէ և փողոցային երթ չէ, որտեղ դուք բարձրախոսի մեջ բղավում եք, որպեսզի ձեզ հարյուրավոր մարդիկ լսեն:

Առաջարկս հետևյալն է. խոսքս ուղղում եմ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հրաժարականը տենչող մեր գործընկերներին, ովքեր, բնականաբար, հանդես են գալիս իրենց ընտրազանգվածի, իրենց ընտրած ու Տարոն Մարգարյանին չընտրած երևանցիների անունից: Սակայն մի մոռացեք, որ Երևանում ապրում են տասնյակ հազարավոր երևանցիներ, ովքեր մեկ տարի առաջ ընտրել են Տարոն Մարգարյանին՝ տեսնելով նրա կատարած աշխատանքը Երևանի քաղաքապետի պաշտոնում և վստահելով նրա ծրագրերին: Տարոն Մարգարյանը քանիցս հայտարարել է, որ հրաժարական չի տալու: Բայց դուք դա զարմանալիորեն չեք ընկալում: Ձեզ թվում է, եթե նրա վրա ձեր գործադրած ճնշումն ավելի ուժեղացնեք, վիրավորեք ու ահաբեկեք՝ հընթացս խախտելով բարոյականության թույլատրվող բոլոր սահմանները՝ Տարոն Մարգարյանը տեղի կտա և կկատարի ձեր պարտադրանքը:

Հարգելի գործընկերներ, նման բան չի լինելու, Տարոն Մարգարյանը հրաժարական չի տալու ոչ թե այն պատճառով, որ, ինչպես դուք եք նշում, կառչած է իր աթոռից, այլ որովհետև

նա չի՛ կարող հուսախաբ անել իր ընտրողներին, չի՛ կարող դավաճանել իր ընտրողներին և չի՛ կարող Երևանը թողնել բախտի քմահաճույքին:

Ուստի՝ ես առաջարկում եմ Տարոն Մարգարյանի հրաժարականը պահանջողներին վերջապես հասկանալ այս պարզ ճշմարտությունը և դադարեցնել այդ ուղղությամբ իրենց ճնշումները:

Անի Խաչատրյան

-Ներողություն, բայց սա հարց ու պատասխան է, ոչ թե ելույթ:

Տարոն Մարգարյան

-Երբ դուք ելույթ էիք ունենում և զուգահեռ հարց էիք տալիս, բոլորս լսում էինք, հարգեք ձեր ընկերոջը, ձեր գործընկերն էլ է խոսում, խնդրեմ:

Աննա Ասատրյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, ինչպիսի՞ սոցիալական աջակցություն է նախատեսվում քաղաքապետարանի կողմից մայրաքաղաքի մանկապարտեզների ավարտական խմբերի, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների տարրական դասարանների երեխաներին սեպտեմբերի 1-ին նախապատրաստելու ուղղությամբ:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի հանրակրթության վարչության պետ Աննա Ստեփանյանը:

Աննա Ստեփանյան

-Շնորհակալությու՛ն, որպես արձագանք պետք է նշեմ, որ ոչ մի զանգ չի եղել և նմանատիպ խնդիր չի բարձրաձայնվել, որին ես լուծում չտամ: Նիստը ավարտելուց հետո Ձեզ սիրով հրավիրում եմ հանրակրթության վարչության ընդունարան, պարզելու, թե Դուք ու՞մ եք զանգահարել: Վստահորեն լրատվության առաջ ես Ձեր հետ միասին պատրաստ եմ իջնել:

Մեկնաբանեմ, որ այս պահին Երևանի ենթակայության մանկապարտեզներից դպրոց պետք է հաճախեն 9500 երեխա, որոնց համար ձեռք են բերվել պայուսակներ, գրենական պիտույքներով, այդ թվում նախակրթարան հաճախող երեխաներին: Սոցիալապես անապահով երեխաներին նույնպես կտրամադրվեն համապատասխան պայուսակները գրենական պիտույքներով:

Տարոն Մարգարյան

- Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Տիգրան Տեր-Մարգարյան,խնդրե՛մ:

Տիգրան Տեր-Մարգարյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ 2018 թվականին Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների 8-րդ ենթակետի մեջ ներառված է Կորյունի 8

հասցեի շենքի բաց պատշգամբների վերանորոգումման հիմնախնդիրների հետ կապված հարցեր: Որի վերջնաժամկետը տրված է հունիսի 1-ը: Ուզում եմ իմանալ, կատարվու՞մ են այդ աշխատանքները և արդյոք հունիսի 1-ին դրանք կավարտվեն: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Ձեր հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Կամո Արեյանը:

Կամո Արեյան

-2018թ համայնքային բյուջեով նախատեսված վթարային պատշգամբների նորոգման ծրագիրը ընթացքի մեջ է: Որոշակի հատվածներում արդեն սկսել ենք աշխատանքները, Ձեր նշված հասցեն հսկողության տակ է, կաշխատենք ժամկետում վերջացնել աշխատանքները:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Հասմիկ Սարգսյան, խնդրե՛մ:

Հասմիկ Սարգսյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հարգելի գործընկերներ, ինպես ասում են «Մոսկվան միանգամից չի կառուցվել» և իրականում, եթե եվրոպական երկրների առաջատար շատ մայրաքաղաքներ վերցնում ենք մեզ համար որպես զարգացած մայրաքաղաքի ձևաչափ, ինպես օրինակ Փարիզն է, ասեմ, որ 60-ական թվականներին կոյուղային համակարգ չեն ունեցել, միայ 60-ական թվականների վերջում են սկսել Փարիզում ջրամատակարարման համակարգը և կոյուղին կառուցել: Այնպես որ հույս ունենանք, որ կգա մի ժամանակահատված, երբ Երևան քաղաքում նման խնդիր չենք ունենա: Դա ամենօրյա աշխատանք է, միասին աշխատենք համբերատար, փոխադարձ ըմբռնումով և հարգանքով: Այդ աշխատանքների արդյունքում Երևան քաղաքում շատ տարածքներ ազատվեցին ավտոտնակներից և փոքրիկների համար բակեր կառուցվեցին, վերանորոգվեցին, ինչի համար շատ ուրախ ենք: Կարծում եմ, սակայն, դա քիչ է մայրաքաղաքի համար, Երևանը զարգացող քաղաք է, փոքրիկները շատ են: Մի քանի օրից ամառային արձակուրդների մեկնարկն է լինելու, կարծում եմ երեխաները ամառային շրջանում կունենան խնդիրներ, ինձ հետաքրքրում է ինպես է կազմակերպվելու փոքրիկների արձակուրդը Երևան քաղաքում, շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Միայն Երևան քաղաքում չի կազմակերպվում, դա կառավարության հետ համատեղ արվում է նաև Երևան քաղաքից դուրս, ինչպես նաև 12 վարչական շրջաններում անց են կացվում որոշակի մշակութային միջոցառումներ, կազմակերպվում են ճամբարներ, որոնք

գործում են բակային տարածքներում: Այժմ կխնդրեմ քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ Ռուզաննա Զաքարյանին ներկայացնել:

Ռուզաննա Զաքարյան

-Շնորհակալությու՛ն: Հարգելի պարոն քաղաքապետ, ավագանու հարգելի անդամներ, տեղեկացնեմ, որ դպրոցահասակ երեխաների ամառային հանգստի ծրագիրը կառավարության համապատասխան որոշմամբ, ինչպես նախորդ տարի, այս տարի ևս իրականացվելու է «դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում» ծրագրի շրջանակներում, համաձայն որի՝ երևանաբնակ, ամբողջ հանրապետության, ինպես նաև Արցախի Հանրապետության երեխաներն էլ են այդ ծրագրով հանգստանալու: Երևանից 1215 7-13 տարեկան երեխաներ իրենց ամառային հանգիստը կանցկացնեն Հանքավանի և Ծաղկաձորի մարզառողջարանային ճամբարներում: Դրանք զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների, սակավ ապահովված, բազմազավակ և ծնողազուրկ երեխաներ ունեցող ընտանիքի երեխաներ են, ովքեր այս տարվա հունիսի 19-ից երեք հերթափոխով կմեկնեն հանգստի: Քաղաքապետի հանձնարարությամբ վարչական շրջանների ղեկավարների կողմից կկազմակերպվեն երեխաների անվտանգ տեղափոխումը ճամբարներ և նրանց վերադարձը, նաև ճամբարներում ծնողների տեսակցություններ: Քաղաքապետի հանձնարարությամբ դարձյալ քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից տեղերում վերահսկողություն կիրականացնեն ծրագրի իրականացման նկատմամբ: Այս ծրագրից բացի, նաև «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում ամառվա երեք ամիսների ընթացքում տարաբնույթ միջոցառումներ կիրականացվեն, որտեղ կներգրավվեն դպրոցահասակ և ավելի ցածր տարիք ունեցող երեխաները:

Հասմիկ Սարգսյան

-Շնորհակալությու՛ն, պարոն քաղաքապետ, Երևանի քաղաքապետարանի և պաշտպանության նախարարության միջև կնքված այդ համաձայնագրի շրջանակներում ունենք փայլուն ծրագիր՝ ծնողների այցելություն զինծառայողներին, որն իրականացվեց ձեր և պաշտպանության նախարարի գլխավորությամբ: Իմ կարծիքով սա կլինի հաջորդ գերազանց միջոցառումը, որը իրականում մեծ նշանակություն ունի այդ երեխաների համար և հիանալի ծրագիր է: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Շնորհակալությու՛ն, երևանաբնակ զինծառայողներին ծնողների այցելությունը ավանդույթ դարձած ծրագիր է, որն իրականացվում է տարվա ընթացքում երկու անգամ: Այս տարի առաջին այցելությունն արդեն կազմակերպվել է, երկրորդը կլինի աշնանը:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Անահիտ Բախշյան, խնդրե՛մ:

Անահիտ Բախշյան

-Պարոն Մարգարյան, առաջին հարցս հետևյալն է. վերջին 10 օրվա ընթացքում, թավշյա հեղափոխության արդյունքում, դպրոցներում Ջինը 22ից դուրս թռավ, շատ շատ դպրոցներում ուսուցիչները որոշեցին բարձրաձայնել իրենց ճնշված արժանապատվության մասին: Եվ 10 օրվա արդյունքում երեք տնօրեն ազատվեց աշխատանքից՝ թիվ 11, 132 և 21 դպրոցների: Այս երեքից երկուսում արդեն քրեական գործ է հարուցվել: Մանկապարտեզի մեկ վարիչ է ազատվել, որովհետև ապօրինի էր նշանակվել: Ցանկանում եմ հարց տալ, մոտավորապես ինչ իմ ընկեր Դավիթը տվեց: Էլ ինչքա՞ն և ինչպիսի՞ բացահայտումներ պետք է լինեն, որպեսզի քաղաքապետարանը համապատասխան կրթության վարչությունը, ֆինանսների վարչությունը հետևի օրենքի և դպրոցում կատարվող ամեն տեսակ գործողություններին: Ինչու՞ եմ ասում հատկապես ֆինանսների: Թիվ 11 դպրոցում 2013-2017 թվականը ներառյալ, 13.500.000 միլիոն դրամ պարգևավճար է տրվել: Ես սրա մասին բազմաթիվ անգամ ասել եմ, և Ձեր հանձնարարությամբ քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետ պարոն Սիմոնյանի հետ գնացինք: Եվ մինչև չեղավ այս փոփոխությունը, այդ բացը մեջտեղ չեղավ: Ցանկանում եմ ասել, քաղաքապետարանն առայժմ միայն փորձում է գնալ հարթեցնել և հարմարվել այդ տնօրենին, այլ ոչ թե ապօրինությունը ի հայտ բերել: Ինչքա՞ն ենք հանդուրժելու բոլոր այն տնօրեններին, ովքեր նման ապօրինություններ են կատարել, որոնց մասին բավականին շատ բողոքներ եմ ստանում: Սա առաջին հարց:

Երկրորդ հարցը վերաբերում է Թումանյան 30-ին: Մեր Երևանցիները լսել են Ձեր արձագանքը իմ ելույթին և հարցնում են Թումանյան 30-ում շինարարության հետ կապված, երբ Դուք ասացիք կասեցվել է, կարելի է հասկանալ թե ի՞նչ է դա նշանակում, կասեցվել է շինարարությունը, կասեցվել է ինչը, մարդիկ արդեն դատարան են դիմել: Հիմա խնդրեմ, բացատրեք, իրենք հեռուստացույցի առաջ լսում են Ձեր բացատրությունը: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Շատ լավ, առաջին հարցի վերաբերյալ ես պատասխանեցի պարոն Խաժակյանին, որ մեր ծառայությունների կողմից, ըստ ոլորտների, հսկողություն իրականացվում է: Դուք նշեցիք երեք-չորս դեպքի մասին, իսկ մենք կարող ենք նշել 30-40 դեպքեր: Մենք չենք բարձրաձայնում այդ հարցերը, հստակ գիտենք, որ անձնակազմն այն դպրոցներում, մանկապարտեզներում կամ հիմնարկներում, որտեղ մեր կողմից ստուգումներ և գործողություններ են իրականցվել,

ամբողջությամբ տեղեկացված է: Դա ամենօրյա աշխատանք է, ամեն օր հսկողություն պետք է իրականցվի, բնականաբար, որտեղ թերություն հայտնաբերեցինք, այնտեղ մեր քայլերը օրենքի սահմանված կարգով կձեռնարկենք: Ինչ վերաբերում է Թումանյան 30-ին՝ Դուք Ձեր խոսքի մեջ ասացիք, այո, սեփականատերը դիմել է, որ մենք նախագիծ հաստատենք: Այդ հարցը դեռ չենք քննարկել և չենք քննարկելու քանի դեռ, որոշակի չափորոշիչների մասին մասնագիտական եզրակացություն չունենանք: Մինչև այն օրենքի պահանջին համապատասխան չլինի, այնտեղ ոչ մի գործողություն չի լինելու: Նաև պահանջ է դրվել սեփականատիրոջ առջև, որ անհրաժեշտ է քաղաքացիների համաձայնությունը, եթե դա չկա, քաղաքաշինական ոչ մի փաստաթուղթ չի ստորագրվի: Այսքանը մեր բնակիչները պետք է իմանան և ուզում եմ հիշեցնել, սրանից ընդամենը 7-8 տարի առաջ այդ տարածքի սեփականատերը շատերի սեփականությունն է գնել, ամբողջությամբ տարածքն ազատել է այլ շինություններից և որոշակի համաձայնեցում է ձեռք բերել տեղի բնակիչների հետ: Վերջին շրջանում, երբ նման դժգոհություն և անհամաձայնություններ են եղել այդ սեփականատիրոջ և բնակիչների միջև, մենք գործողություններն ամբողջությամբ դադարեցրել ենք: Մինչև քաղաքացիների համաձյնությունը չլինի: Եթե չեմ սխալվում, դատական կարգով որոշ գույքեր տրվել են սեփականատիրոջը:

Անահիտ Բախշյան

-Այնտեղ շինհրապարակ ստեղծելու թույլտվություն տրվել է արդեն:

Տարոն Մարգարյան

-Դա 3 տարի առաջվա խնդիր է եղել: Իսկ ես 7-8 տարվա մասին եմ խոսում: Կրկնում եմ, այսօր մենք քաղաքաշինական փաստաթղթեր չենք տրամադրելու մինչև օրենքին չհամապատասխանի և քաղաքացիների համաձայնությունը չլինի:

Անահիտ Բախշյան

-Պարոն Մարգարյան ապրիլի 23-ին եկել են շինհրապարակ և փակել են:

Տարոն Մարգարյան

-Ճիշտ եք ասում, հենց այդ օրը մենք դադարեցրել ենք նաև իրենց գործողությունը:

Անահիտ Բախշյան

-Հիմա չգիտեմ ով է ճիշտ ասում:

Տարոն Մարգարյան

- Հիմա այնտեղ աշխատանքներ կատարվու՞մ են:

Անահիտ Բախշյան

-Ոչ, փակել են, չեն թողնում մենք բացենք:

Տարոն Մարգարյան

-Այնտեղ շինհրապարակ դեռ 3-4 տարի առաջ էլ կար: Երբ գույքը սեփականացրել էր և քանդման աշխատանք էր իրականացնում:

Անահիտ Բախշյան

-Համենայն դեպս դատարան են դիմել:

Անահիտ Բախշյան

Ինչ վերաբերում է դպրոցներին՝ ցանկացած դպրոցում, որ տնօրենին ազատում եք, ես տեղյակ եմ լինում: Չգիտեմ ես որտեղից եմ իմանում: Ինչու՞ այն բոլոր տնօրենները, ովքեր ազատվել են նախորդ տարիներին, քաղաքապետարանը դրա մասին չի հրապարակում: Չի նշվում, որ ա՛յս տնօրենը ա՛յս պատճառով աշխատանքից ազատվել է: 132 դպրոցի տնօրենի նկատմամբ քրեական գործ է հարուցվել, այնուհետև՝ նա մի կերպ հրաժարական գրեց: Ինչու՞ դուք այդ վատ երևույթների մասին Ձեր կարծիքը չեք հրապարակում, որ մյուսներն էլ տեսնեն, դուք նույնպես դրան համամիտ չեք:.

Տարոն Մարգարյան

-Այդ քրեական գործը 10 օրում չի բացահայտվել, այլ մի քանի ամսվա ընթացքում, այդպես չէ՞:

Անահիտ Բախշյան

-Ո՛չ, մի քանի ամիս չէ: Բացահայտվել է ապրիլի վերջին և դպրոցի տնօրենը հրաժարականը տվեց:

Եվ վերջապես, եթե տնօրենը կոռուպցիոն խողովակով քաղաքապետարանի հետ կապված չէ, ինչու՞ եք այդ մարդուն ասում դիմում գրի, այլ ինչու՞ չեք հեռացնում: Ինչու՞ չեք խայտառակում, եթե նա ձեր անունն է խայտառակում: Դուք շատ լավ հասկացաք, թե որ դպրոցի մասին եմ ասում: Նա ոչ թե պետք է դիմում գրի, այլ Դուք հրապարակավ պետք է այպանեք իր խոսքը, իր ասածները հրապարակեք, որ այսպիսի բան չի կարելի:

Տարոն Մարգարյան

-Տիկին Բախշյան, կա ընթացակարգ, իրավապահ մարմինները բողոքի հիման վրա քննություն է իրականացնում: Եվ քանի որ, քննություն է ընթանում, և մինչև վերջնական որոշում չլինի, հեռացում չի կարող լինել: Եթե տնօրենը իր ցանկությամբ դիմում է գրում, մենք պարտավոր ենք դիմումին ընթացք տալ: Բայց դա չի նշանակում, որ գործընթացը, քրեական գործը կասեցվեց, այն շարունակվում է զուգահեռ:

Անահիտ Բախշյան

-Այդ ընթացքում պետք է տնօրենի գործունեությունը կասեցվի, դա օրենքն է պահանջում: Հիշեցնե՞մ թիվ 27 դպրոցի պատմությունը:

Տարոն Մարգարյան

-Դա քաղաքապետը չի կասեցնում, դատարանի և քննիչի որոշմամբ է կասեցվում:

Հաջորդ հարցը՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Լիլիթ Բեգլարյան, խնդրե՛մ:

Լիլիթ Բեգլարյան

-Շնորհակալությու՛ն, հարցս ուղղում եմ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տուրիզմի բաժնի պատասխանատուներին: Խնդրում եմ տեղեկատվություն տրամադրել, թե ինչ աշխատանքներ են իրականացվում ամռան ամիսներին մայրաքաղաքում զբոսաշրջության զարգացման համար և առհասարակ ինչ ռազմավարություն է մշակվել զբոսաշրջիկներին գրավելու համար:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի տուրիզմի բաժնի պետ Գևորգ Օրբելյանը, խնդրե՛մ:

Գևորգ Օրբելյան

-Շնորհակալությու՛ն հարցի համար: Մեծարգո պարոն քաղաքապետ, ավագանու հարգելի անդամներ, շնորհակալություն եմ հայտնում մեր քաղաքում տուրիզմի կարևոր ոլորտին ուշադրություն դարձնելու համար և ուզում եմ ներկայացնել, որ Երևանի քաղաքապետարանը տարիներ շարունակ զարգացրել է միջոցառումային զբոսաշրջությունը, ինչի արդյունքում մենք Երևանում ամռան օրերին ունենում ենք մի շարք ծրագրեր:

Դրանցից են մեր կարևորագույն զբոսաշրջային բաղադրիչը պարունակող երք կարևոր փառատոները, առաջինը հունիսի 10-ին Երևանի 2800-ամյակին ընդառաջ «Համով-հոտով Երևան» փառատոնը, որն անցկացվելու է «Հայկական խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Երկրորդը՝ «Երևան տարազֆեստ»-ն է՝ Երևան տարազի փառատոնը և հինգ տարի շարունակ տեղի ունեցող Երևանի գարեջրի փառատոնը: Այս երեքը մեր քաղաք այցելած զբոսաշրջիկների ամենասիրելի փառատոներից են, որոնց մասնակցում են թե՛ զբոսաշրջիկները, թե՛ մեր համաքաղաքացիները:

Ցանկանում եմ նշել նաև, որ վերջին տարիներին տուրիզմի ոլորտում բարեփոխումները նպաստել են նրան, որ Երևանում շուտով կունենանք նաև զբոսաշրջային երկու տեղեկատվական կենտրոն, որոնք կկարողանան մայրաքաղաք այցելած զբոսաշրջիկներին իրազեկել քաղաքում գտնվող տեսարժան վայրերի մասին և անվճար հիմունքներով տալ տեղեկատվություն: Բացի այդ, տպագրում ենք բազմալեզու քարտեզներ,

որոնք օգնում են զբոսաշրջիկներին տեղեկատվություն տրամադրել և ուղղորդել քաղաքի տեսարժան վայրերը: Կարծում եմ այս ամենը կնպաստի ամռան ընթացքում զբոսաշրջիկներին կողմնորոշվելու և իրենց ժամանցը Երևանում կազմակերպելու համար: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Սերգեյ Ղահրամանյան, խնդրե՛մ:

Սերգեյ Ղահրամանյան

-Շնորհակալություն: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում վերջին ամսվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները, թավշյա հեղափոխությունը, ինչպես նաև քաղաքական իրավիճակի փոփոխման դրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր, ճանապարհային ոստիկանության բաժինը նախաձեռնել է 2012 թվականից մինչև 2017 թվականն ընկած ժամանակահատվացում, բոլոր չվճարված և կուտակված տուգանքների պարտքերի մասով, կիրառել համաներում վարորդնորի նկատմամբ: Արդյոք մտածել եք կամ առաջարկություն ստացել եք կարմիր գծերի մասով, որը վճարովի համայնքային ավտոկայանատեղիներն են, որոնք ևս առնչվում են վարորդներին, համաներում կիրառվի և եթե դեռևս չի առաջարկվել, միգուցե մոտակա ժամկաներում քննարկվի՞ այդ հարցը:

Տարոն Մարգարյան

-Շատ լավ, բայց ճանապարհային ոստիկանության համաներումը եղե՞լ է:

Սերգեյ Ղահրամանյան

-Ո՛չ, հարցը քննարկվում է Ազգային ժողովում, բայց կարծում եմ սպասեցնել չի տա:

Տարոն Մարգարյան

-Վերջնական արդյունքները լինելու դեպքում անպայման հաշվի կառնվի:

Սերգեյ Ղահրամանյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Իսակովի պողոտայի հարակից՝ 3/8 հասցեում ինչ-որ մեկի կողմից մայիսի 1-7-ն ընկած ժամանակահատվածում հենց փողոցի վրա մոտ 2-2.5 մետր հատված շինարարություն իրականացնելուն: Ես ահազանգել էի, որպեսզի, նախ, ուսումնասիրվեր արդյոք ապօրինի է, թե ոչ և ի՞նչ է տեղի ունեցել: Ես Կենտրոն վարչական շրջանի կողմից ստացա նամակ, որ այդ անձը 2017 թվականի նոյեմբերի 22-ին տուգանվել է հովար տեղադրելու համար: Այնուհետև իրականացնում եմ 2-րդ և 3-րդ ահազանգը, խնդրում եմ տրամադրել այդ տուգանքի հիմքերը և, եթե կա շինարարական թույլտվություն, ապա տրամադրել ինձ և այդ ահազանգերիս գալիս է միևնույն առաջին պատասխանը, որ այս մարդուն տուգանել ենք 2017 թվականին, նույն բովանդակությունը բառից բառ կրկնությամբ:

Ի՞նչ կարող ենք անել նման դեպքում, ի՞նչ է տեղի ունենում, ինչու՞ երեք տարբեր հարցերի գալիս է միևնույն, ոչինչ չասող պատասխանը: Ընդ որում՝ փաստացի ունենք մի տարածք, որտեղ չգիտենք էլ ապօրինի է թե՞ օրինական, բայց շինություն է կառուցվել ճանապարհի վրա և պատասխանն ընդհանրապես կապ չունի հարցի հետ: Խնդրում, եմ եթե հնարավոր է, պարզաբանեք:

Տարոն Մարգարյան

-Շատ լավ, Ձեր բարձրացրած հարցը տեղին է, և մենք հիմա գործողություններ ենք իրականացնում, այնտեղ օրինական չէ այդ շինարարությունը, ապօրինի են կառուցել, ժամանակը ճիշտ նշեցիք: Դեռ նախորդ տարի, նույն սեփականատերը կցակառույց էր կառուցել և մեր կողմից քանդվեց այն, բերվեց հին տեսքին: Եվ այս ընթացքում, փորձել է ապօրինություն իրականացնել, որը մեր կողմից կանխվել է:

Ապօրինության փաստ կա և հիմա ծանուցումներ են պատրաստվել մեր ծառայությունների կողմից և գործընթաց է իրականացվում: Բնականաբար՝ այդ ապօրինությունը պետք է վերացնենք և վարչական տուժի ենթարկենք: Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունը և Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմը այժմ այդ գործընթացի մեջ են: Հավաստիացնում եմ, որ բոլորդ կտեսնեք այդ շինությունը քանդված:

Սերգեյ Ղահրամանյան

-Շնորհակալությու՛ն, զուտ որպես դիտարկում, այստեղ մյուս ընթացակարգային հարցն է մնում, թե ինչու՞ նման պատասխան չտրվեց, ինչ-որ նոր դուք ասացիք, իհարկե շատ լավ է, այլ ուղղակի թղթի վրա ինչ-որ բառեր էին գրում և ինձ էին ուղարկում, դա որպես դիտարկում ընդունեք, որպեսզի այլ բաժիններ նման պատասխաններ չփոխանցեն: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետը նիստին ներկա է, լսում է այս հարց ու պատասխանը, դեռևս 15-20 օր առաջ քաղքաշինության և հողի վերահսկողության վարչությանը և Կենրոն վարչական շրջանի ղեկավարին այս հարցի վերաբերյալ տրվել է հանձնարարական:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Նարա Հովհաննիսյան, խնդրե՛մ:

Նարա Հովհաննիսյան

-Հարգելի՛ երևանցիներ, պարոն քաղաքապետ, ըստ ամենայնի, Երևանի ավագանու առաջին նիստն է, որին մասնակցում եմ որպես ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ և պիտի ասեմ, որ տպավորությունս, կարծես ընկել եմ «ծուռ հայելիների» թագավորություն,

որտեղ իրականությունը բոլորովին խեղաթյուրված է և տեսնում ենք ուրիշ պատկեր, քան է արտաքին աշխարհում, շենքից դուրս:

Մոտ երկու շաբաթ առաջ, պարոն Մարգարյան, ես Ձեր հարցազրույցներից մեկից տեղեկացա, որ հայտարարել էիք «թավշյա» հեղափոխության հաջողություններից, Ձեր կարծիքով, ամենանշանակալին, ամենակարևոր քայլը դա արագությունն էր և նշել էիք, որ Դուք, համենայնդեպս, կփորձեք ևս արագ լինել: Այս առումով լսում ենք և տեղերում և բոլորս աշխատում ենք ներգրավված լինել Երևանի արդյունավետ կառավարման, թափանցիկ, հաշվետու, այն բոլոր ընթացակարգերին, ինչ որ ՏԻՄ մարմինները ընդհանրապես պատասխանատու են: Ի պատասխան լսում ենք հանգիստ, հավասարակշիռ, օլիմպիական հանդարտությամբ, Ձեր իրոնիայով լեցուն նկատառումները: Մեր կոլեգաները, իհարկե, կանայք իրենց նուրբ լսողությունը վիրավորվում է, համաձայն եմ:

Ուզում եմ հարցնել Ձեզ, որպես Երևանի քաղաքապետ, տեղյա՞կ եք, որ երկրում նախապատրաստվում են խորհրդարանական արտահերթ ընտրություններ և, եթե Դուք արագ չեք գործելու, ուզում եմ ամենայն հարգանքով նշել, որ ինձ համար առավել կառուցողական կլինի ձեր թիմի, ապարատի, ամբողջ քաղաքապետարանի աշխատակազմի մի փոքր ավելի արագ և հաշվետու աշխատելառճի փոփոխությունը, ինչը չտեսանք այսօր օրակարգում: Այս օրակարգը, որով այսօր աշխատեցինք Երևանի ավագանիում, ակնհայտորեն մեկ բանի վկայությունն էր, որ Դուք մտադիր եք նախկինի նման աշխատել և այստեղ կգանք նախկինի նման, կխոսենք, մանր քայլեր կանենք, փոքր-փոքր բացահայտումներ կանենք և կգնանք առաջ դեպի ու՞ր: Արդյոք չեք պատրաստվում ինքներդ քայլ անել և կամ ավելի կոնկրետ հարց ունեմ Ձեզ, քաղաքապետարանում յուրաքանչյուր ծառայություն, յուրաքանչյուր պաշտոնյա գտնում եք, որ կատարում է այն ծառայողական, աշխատանքային պարտականությունները, որոնք դրված են իրենց վրա: Շնորհակալ եմ:

Տարոն Մարգարյան

-Շնորհակալությու՛ն հարցի համար: Ես Ձեր կողմից նշված հարցազրույցը չեմ տվել: Մեր փակ խորհրդակցությունից ինֆորմացիայի արտահոսք է եղել լրատվական դաշտ և եթե ընթերցած լինեիք՝ կտեսնեիք, որ դա հարցազրույց չէ, այլ ինֆորմացիայի արտահոսք:

Ինչ վերաբերում է քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքին, այո՛, եթե աշխատում են, ուրեմն իրենց պարտականությունները կատարում են, սակայն դա չի նշանակում, որ պարտավորությունները չկատարող աշխատակիցները մնալու են իրենց տեղում:

Իմ կողմից, բնականաբար, կլինեն համապատասխան գործողություններ և համապատասխան մոտեցում այն աշխատակիցների նկատմամբ, ովքեր կթերանան:

Այսօրվա դրությամբ այն հանձնարարականները և այն ծրագրերը որոնք իրականացվում են մեր կողմից, ոլորտների պատասխանատուները իրենց աշխատանքը բարեխիղճ կատարում են և իմ, որպես քաղաքապետի, ուշադրության և վերահսկողության կենտրոնում են: Հակառակ պարագայում կձեռնարկվեն համապատասխան միջոցներ:

Չէի ցանկանա, Ձեր կողմից նման գնահատական լսել ավագանու նիստի օրակարգի վերաբերյալ: Ասեմ, որ օրակարգի յուրաքանչյուր հարց վերաբերվում է քաղաքացուն և մեր համաքաղաքացիների կողմից հարգանք վայելած անվանի մարդկանց հուշատախտակների տեղադրմանը: Հարցերը քննարկվեցին ավագանու նիստի ժամանակ և ավագանիների կողմից արժանացան դրական գնահատականի և որոշում ընդունվեց: Ես Ձեզ հետ համակարծիք չեմ, կցանկանայի շարունակեիք ավագանու նիստերին մասնակցել, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներն ավելի լավ ուսումնասիրել, այնուհետև կարծիք հայտնել: Ամեն դեպքում դա Ձեր իրավունքն է, ես, որպես քաղաքապետ, իմ բարեկամական հորդորն եմ ուղղում Ձեզ:

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Հարություն Բաբայան,խնդրե՛մ:

Հարություն Բաբայան

-Շնորհակալությու՛ն, հարցս ուղղում եմ Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարին: Բյուջեում նախատեսում էր արվել Դավթաշեն վարչական շրջանի սեփական սեկտորի 7-րդ փողոցի սկզբնամասն ասֆալտապատել և ապահովել փողոցային լուսավորությունը: Քանի որ պատասխան կար, որ ընդունվել է բյուջեի մեջ և կիրականացվի առաջնահերթության սկզբունքով, այսպիսի ձևակերպում կա. «Առաջարկում եմ ներկայացված հասցեն բյուջեի շրջանակներում կուսումնասիրվի, առաջնահերթության սկզբունքի պահպանմամբ կիրականացվի ասֆալտապատում, ինչ վերաբերում է չլուսավորվող փողոցների լուսավորման ապահովմանը, ապա փողոցի նշված հատվածն ընդգրկվել է 2018թ. լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքների ծրագրում»: Հիմա երկու դեպքում էլ ինձ հետաքրքրում է ե՞րբ, ու քաղաքացիների մտահոգությունն ուզում եմ ձեր պատասխանով բավարարել: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Եթե ինձնից հստակ ժամանակացույց եք ուզում՝ օր, ժամ, նշեմ, որ նոր ենք սկսել այդ ծրագրերը, համապատասխան վարչության պետը և համակարգող տեղակալը լսեցին ձեր կողմից բարձրացված հարցը, եթե պատասխանել ենք, որ 2018թ. ծրագրում ընդգրկված է և առաջնահերթության ծրագրով կիրականացվի, համոզված եղեք, որ իրականացվելու է: Պարոն Մհերյան ձեզ մոտ նշեք հասցեն և տվյալները և այդ վարչական շրջանում հենց սկսենք ծրագիրն իրականացնել, մեր գործընկերոջ բարձրացված հարցին միանգամից լուծում տվեք:

Հարություն Բաբայան

-Շնորհակալությու՛ն: Երկրորդ հարցս վերաբերում է Հալաբյան 37/6 և 37/7 հասցեում շատ արագ տեղի ունեցող շինարարությանը: Շենքի հարևանները և շինության հարևանությամբ գտնվող բնակիչներն ունեն բողոք և գանգատ, բայց քանի որ, ինչպես նշեց պարոն Օհանյանը, ելնելով անմեղության կանխավարկածից, ես հարց եմ ուղղել՝ հասկանալու համար, արդյոք այդ շենքի բնակիչների կողմից կա համաձայնություն շենքի հարակից տարածքում շինարարական աշխատանքներ կատարելու վերաբերյալ, իր տրամաբանական հետևանքներով, քանի որ հաջորդ հարցը, եթե ոչ, ապա ով է թույլ տվել, այդ ենթատեքստով:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ա. Քասարյանը:

-Հարցը վերաբերում է Հալաբյան փողոցի ներքևից՝ Կինյան կամրջից բարձրացող աջ թևի կողային աշխատանքների՞ն:

Հարություն Բաբայան

-Ո՛չ, Ջանիբեկյան խաչմերուկից դեպի Կինյան կամուրջ իջնող աջ հատվածը:

Անդրանիկ Քասարյան

-Քաղաքաշինական փաստաթղթեր տրվել է տեղում գոյություն ունեցող շինության վերակառուցման համար, իր ֆիզիկական չափերի մեջ կառուցվում է երկրորդ հարկ և դա ոչ մի ձևով չի խոչընդոտում ոչ ինսոլացիոն ռեժիմները, ոչ էլ քաղաքաշինական նորմերը, այսինքն՝ շինությունը վերակառուցվում է:

Հարություն Բաբայան

-Ես ներողություն եմ խնդրում, քանի որ ես այդ տարածքի բնակիչ եմ, նախ շինությունը կրկնապատկվել է և՛ լանությամբ, և՛ բարձրությամբ: Հիմա բարձրությանը վերաբերող հարցին Դուք ինչ-որ կերպ պատասխանեցիք, բայց շինությունը չափերով փոխվել է, այսինքն՝ նախնական տեսքի համեմատ կրկնակի մեծացել է, ես այդ մասին եմ ասում: Հիմա շինարարությունը, չգիտես ինչու, կանգնած է, ես չգիտեմ ինչու, բայց լավ է, որ կանգնած է, միգուցե Դուք միջամտե՞ք այդ հարցին:

Անդրանիկ Քասարյան

-Խնդրում եմ, եթե հնարավոր է, վարչությունում իրար հետ գծագրերով քննարկենք:

Հարություն Բաբայան

-Սիրով:

Տարոն Մարգարյան

-Պարոն Ասատրյան, այդ քննարկմանը կմասնակցեք նաև Դուք, հասկանանք ինչումն է խնդիրը:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Զարուհի Բաթոյան,խնդրե՛մ:

Զարուհի Բաթոյան

-Շնորհակալությու՛ն, պարոն Մարգարյան, վերջերս շատ են տարբեր բողոքներն ու ակցիաները, թե՛ հանրային այգիների, և վերջերս էլ, կարծես մի փոքր աղմուկ բարձրացրած, մետրոյի շարժակազմի ձևավորման հետ կապված և այլն: Որոշ նախագծերի մենք ինքներս, որպես ավագանու անդամներ, կողմ ենք քվեարկել, որովհետև հավատում ենք, որ իսկապես շատ լավ գործ է արվելու քաղաքի համար, փորձը ցույց է տալիս, որ շատ քաղաքացիներ, հատկապես տարբեր ոլորտի մասնագետներ, կտրված են այս ամբողջ գործընթացից և հանրային քննարկումներ կազմակերպելու պահանջ կա:

Չե՞ք կարծում, որ, այնուամենայնիվ, այդ հանրային քննարկումներն անհրաժեշտ են ավելի հաճախ կազմակերպել, ավելի արդյունավետ մեթոդներ կիրառել դրա համար, որպեսզի տարբեր առիթներով այդ աղմուկները, բողոքները չլինեն: Եվ եթե մենք շատ լավ ծրագրեր ենք իրականացնում, ապա այդ մասին ի սկզբանե տեղյակ պահենք քաղաքացիներին, սա առաջին հարցս:

Տարոն Մարգարյան

-Շատ բարի, իրականում հարցը տեղին եք բարձրացնում: Արդեն ժամանակն է, կարող ենք անկեղծ լինել, նույիսկ փոքր-ինչ ուշացրել ենք, պետք է նմանատիպ հանրային քննարկումների հարթակներ ստեղծել: Արդեն մեր թիմին հանձնարարական է տրվել: Ըստ ոլորտների, մենք ունենք հանձնաժողովներ, որ հանրային քննարկումեր են իրականացնում, բայց դա բավարար չէ: Պետք է փորձենք էլեկտրոնային տարբերակով, նաև մեր պաշտոնական կայքի միջոցով ստեղծել հարթակներ և անպայման մոտ ժամանակներս հանրությանը կներկայացնենք այդ հարթակների մասին և մասնակից կդարձնենք հանրային հնչեղություն ունեցող մեր բոլոր հարցերի քննարկումներին, և ինչու չէ, այո, մեր քաղաքացին նույնպես պետք է մասնակից լինի այդ գործընթացներին:

Զարուհի Բաթոյան

-Շնորհակալություն, կարծում եմ սա շատ կարևոր է հատկապես տարբեր մասնագիտական խմբերի և հասարակական կազմակերպություններին ներգրավելու համար, այդ թվում դիզայներների, անկախ փորձագետների, էկոլոգների և այլն:

Երկրորդ հարցս. պարոն Մարգարյան, կապված վերջին շրջանում ջրահեռացման կամ շինարարական տարբեր խնդիրների, անվտանգության կանոնները ոչ բավարար կերպով ապահովելու հետ: Տարբեր քաղաքացիներ վնասներ են կրում, այդ թվում նյութական: Տարբեր հարցերում, օրինակ՝ ջրահեռացման հետ կապված, Վեոլիա Ջուրն է պատասխանատու, շինարարության համար մեկ այլ կազմակերպություններ: Ես ուզում եմ իմանալ, քաղքապետարանը արդյոք ունի՞ գործուն մեխանիզմ և կարո՞ղ է փոխհատուցել քաղաքացու վնասը: Դա կարող է պատահել օրինակ ձմռանը, մեքենաների վնասվելուց կամ մարդը կարող է ֆիզիկական վնաս կրել և այլն, արդյոք կան նման մեխանիզմեր, թե՞ քաղաքացին, այդ վնասի փոխհատուցման համար ստիպված է դիմել դատարան:

Տարոն Մարգարյան

-Շատ լավ, քանի որ Ձեր հարցը իրավական ոլորտի շուրջ է, կզեկուցի և կտեղեկացնի պարոն Առաքելյանը:

Զավեն Առաքելյան

-Շնորհակալությու՛ն, գործող օրենսդրությունը հստակ կարգավորում է վնասի հատուցման և՛ ընթացակարգը, և՛ վարչական մարմնի կողմից, այն բոլոր ընթացակարգերը, որոնք պետք է վարչական մարմինը իրականացնի գործունեության կամ անգործության հետևանքով քաղաքացիներին պատճառված վնասների հատուցման համար: Մենք ունենք դեպքեր, երբ քաղաքացիները դիմել են համապատասխան վնասների հատուցման մասով: Դիմումների հիման վրա հարուցվել է վարչական վարույթ, քննարկվել են և այդ դեպքերի մեծ մասը վերաբերում են ոչ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի արդյունքում պատճառված վնասների, պայմանական՝ բազմաբնակարան շենքերի տանիքներից պոկված իրեր կամ այլ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքի հետևանքով պատճաձված վնասներ: Այս դեպքում մենք համապատասխան վարչական ակտով հիմնավորում ենք քաղաքապետարանի կողմից վնասը չփոխհատուցելու պարտավորության բացակայության մասին, միաժամանակ ուղղորդում ենք դիմեն այն մարմնին, ում պարտավորության մեջ է մտնում, այդ վնասի փոխհատուցումը, եթե իհարկե վնասը առաջացել է այդ մարմինների մեղքով: Բայց նաև ունենք դեպքեր, որ վնասները կապված են եղել Երևան համայնքի սեփականության իրավունքով պատկանող գույքի հետ: Օրինակ՝ կարող եմ նշել Երևանի սեփականություն հանդիսացող կամրջից սառույցի ընկնելու կամ ծառի տապալման դեպք: Այդ դեպքում վնասների փոխհատուցումը սահմանված կարգով տրամադրվել է:

Զարուհի Բաթոյան

-Այսինքն՝ քաղաքացիները որոշ վնաս կրելու դեպքում կարող են դիմել քաղաքապետարան, մեկ պատուհան կամ համապատասխան բաժին, որտեղից իրենց կուղղորդեն պատասխանատուներին, որքեր կրում են այդ պատասխանատվությունը:

Զավեն Առաքելյան

-Այո՛, կարող են դիմել քաղաքապետարան՝ մեկ պատուհանի միջոցով, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Պարտադիր այդ դիմումերի հիման վրա հարուցվում է վարչական վարույթ, իրականացվում են լսումներ, բոլոր հանգամանքները պարզվում են և, եթե իրականում այդ խնդիրն առկա է, ապա այդ դիմումներին համապատասխան ընթացք է տրվում:

Տարոն Մարգարյան

-Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի՛ անդամներ, Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 4-րդ նիստը հայտարարում եմ փակված:

Շնորհակալությու՛ն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կազմեցին՝ Անի Եփրիկյան
Աստղիկ Պետրոսյան